ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 0306/1808 20.04.2018թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-գնդապետ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի ապրիլի 19-ին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Իջևանի ՁՊՎ արձանագրել է.

Թերություններ՝

1. Լոգարանում տաք ջուրը ուշ էր միանում և ամբողջովին չէր տաքանում, որով հնարավոր չէր լոգանք ընդունել:
2. Զուգարանից տհաճ հոտ էր գալիս, մաքրման և աղտահանիչ միջոցներ չէր իրականացվում, օդափոխության համակարգը չէր աշխատում:

Խախտումներ՝

Ս.Հ.Մ. ձերբակալվել է 06.01.18թ. ժամը 20.00-ին, ՁՊՎ է ընդունվել նույն օրը 22.15-ին, ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի Ս.Մ. ազատ է արձակվել 09.01.2018թ. քննիչի որոշումով, որտեղ ժամը նշված չէ և հնարավոր չէ պարզել տվյալ անձի Սահմանադրությամբ նախատեսված 72 ժամը խախտվել է, թե ոչ:

Խախտման պատճառը Դիտորդական խմբի համար առավել քան պարզ էր, որովհետև անհասկանալի պատճառներով նրա խափանման միջոց կալանքի հարցը տեղափոխվել էր Տավուշի մարզի Բերդի իրավասության դատարան և ձերբակալվածը ՁՊՎ-ից դուրս էր բերվել դատարան տեղափոխվելու համար 09.01.2018թ. ժ. 18.40-ին, արդյունքում նրա առավելագույն 72 ժամը լրանալուց մեկ ժամ քսան րոպե առաջ: Այսպիսով, խնդիրը կայանում է նրանում, որ մեկ ժամ քսան րոպեի ընթացքում հնարավոր չէ ձերբակալվածին Իջևան քաղաքից տեղափոխել Բերդ քաղաք, դատավորի կողմից քննության առնել

ՀՀք.Գյումրի 3123,Կ.Սարգսյան 13
www.policemonitoring.org
Հեռ./Ֆաքս: (+374 77) 86 99 66
E-mail: info@policemonitoring.org

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ
ՄՏԻՑ թիվ 1034
«02» 05 2018թ.

միջնորդությունը, այն քննարկել և որոշում կայացնել միջնորդությունը [illegible]
և հաջորդիվ քննիչի կողմից ազատ արձակման որոշում կայացնել և անձին ազատ արձակել:

Այսպիսով, փաստերը վկայում են, որ Ս.Հ.Մ. ձերբակալման առավելագույն 72 ժամը խախտվել է և նա ավել է պահվել անազատության մեջ:

Անհրաժտության դեպքում կարող ենք տրմադրել փաստերը հաստատող բոլոր գրառումները:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստերը և տալ մեկնաբանություն դրանց վերաբերյալ:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Հովհաննիսյան

ՀՀք.Գյումրի 3123,Կ.Սարգսյան 13
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 77) 86 99 66
E-mail: info@policemonitoring.org